# Տեղեկատվական վեճերի խորհուրդ

# Փորձագիտական եզրակացություն

**(«Հայկական ժամանակ» օրաթերթի 14.10.2010թ. թիվ 188 (2623) համարում հրապարակված՝ «Ութից յոթը ցուցակում են» վերտառությամբ հոդվածի վերաբերյալ)**

## 1. Գործի հանգամանքները

1.1. 14.10.2010թ. «Հայկական ժամանակ» օրաթերթի թիվ 188 (2623) համարում հրապարակվել է «Ութից յոթը ցուցակում են» վերտառությամբ հետևյալ հոդվածը, որն ուղեկցվել է ութ անձանց, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ռուբեն Հայրապետյանի, Լևոն Սարգսյանի և Սամվել Ալեքսանյանի լուսանկարների հրապարակմամբ:

*“Մեր տեղեկություններով՝ ՌԴ ազգային անվտանգության մարմինը, դատախազությունը եւ մյուս իրավապահ մարմինները տարբեր քրեական գործերի նախաքննության ընթացքում՝ հիմնականում նարկոթրաֆիքի, թրաֆիքինգի եւ փողերի լվացման գործերով, պարզել են, որ հանցագործությունների հետ առնչություն ունեն նաեւ ՀՀ պաշտոնյաներ:*

*ՌԴ իրավապահները պարզել են, որ ռուսական կրիմինալ խմբավորումները ՀՀ տարբեր պաշտոնյաների հետ սերտ կապերի մեջ են, եւ կազմել են տարբեր քրեական գործերի հետ առնչություն կամ ռուսական կրիմինալ խմբավորումների հետ կապեր ունեցող ՀՀ պաշտոնյաների ցուցակ, որում ընդգրկել են 32 անուն: Մեր տեղեկություններով, այս ցուցակի վերաբերյալ ՌԴ դատախազության ներկայացուցիչները զրուցել են «Միաբանություն» հայկական ազգային ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանի հետ: Ցուցակը ՌԴ դատախազության ղեկավարությունը ոչ պաշտոնական ֆորմատով ցուցադրել է ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին եւ ԱԱԾ տնօրեն Գորիկ Հակոբյանին: Ռուսական կողմը ցուցակում նշված անձանց պատասխանատվության ենթարկելու հարց է բարձրացրել: Սակայն, ՀՀ վերը նշված պաշտոնյաներն իրենց ռուս գործընկերներին պատասխանել են, որ այդ խնդիրը լուծելու համար իրենք շատ փոքր մարդիկ են: Մեր տեղեկություններով, ՌԴ իրավապահների կազմած ցուցակի առաջին յոթ հորիզոնականներում հետեւյալ անուններն են. Սերժ Սարգսյանի եղբայր, ԱԺ պատգամավոր Սաշիկ Սարգսյան, ԱԺ պատգամավորներ Ռուբեն Հայրապետյան («Նեմեց Ռուբո») եւ Լեւոն Սարգսյան («Ալրաղացի Լյովիկ»), ՀՀ ՊԵԿ նախագահ Գագիկ Խաչատրյան, ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյան («Լֆիկ Սամո»), ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյան եւ ԱԺ ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյան: Ըստ մեր տեղեկությունների, ՌԴ իրավապահները ցուցակում Սերժ Սարգսյանի անունը չեն ընդգրկել, քանի որ ի սկզբանե բացառել են, որ հնարավոր կլինի նրան պատասխանատվության ենթարկելու հարց բարձրացնել”:*

1.2. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ռուբեն Հայրապետյանը, Լևոն Սարգսյանը և Սամվել Ալեքսանյանը (այսուհետ՝ հայցվորներ) 26/10/2010թ. հետևյալ գրությամբ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ից (այսուհետ՝ պատասխանող) պահանջել են հերքել իրենց պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունները.

*ՀԵՐՔՄԱՆ ՊԱՀԱՆՋ*

*Ձեր կողմից հրապարակող զանգվածային լրատվության միջոցի՝ «Հայկական Ժամանակ» օրաթերթի համար 188 (2623), հոկտեմբեր 14/ հինգշաբթի/ 2010թ.-ի համարի առաջին էջի կենտրոնում, որտեղ օրաթերթը զետեղում է առավել կարևոր և ուշագրավ տեղեկությունները, հրապարակվել է տեղեկատվություն, որը վերնագրված է. "Ութից յոթը ցուցակում են", իսկ ստորեւ փակցված են ութ անձանց, այդ թվում մեր, լուսանկարները: Հոդվածում, մասնավորապես որպես փաստ ներկայացվում են հետևյալ ապատեղեկատվությունը.*

*….*[1]

*Հայտնում ենք, որ նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են մեր պատիվն ու արժանապատվությունը:*

*Ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով պահանջում ենք հերքել նշված տեղեկությունները՝ սույն փաստաթղթին կից ներկայացված տեքստը Ձեր անունից օրաթերթի հաջորդ համարի առաջին էջում հրապարակելու միջոցով:*

*Միաժամանակ տեղեկացնում ենք, որ սահմանված կարգով և ժամկետում հերքումը չհրապարակելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմելու ենք դատական պաշտպանության…»*

1.3. 01/11/2010թ.-ին պատասխանողը պատասխանել է հայցվորների գրությանը, մասնավորապես նշելով.

*«…Ձեր հերքման պահանջում դուք չեք նշել, թե որոնք են «Հայկական Ժամանակ" օրաթերթի թիվ 2623 թողարկման առաջին էջում զետեղված «Ութից յոթը ցուցակում են» հրապարակման մեջ ձեր* անձերի *հետ կապված փաստացի անճշտությունները:*

*Բացի այդ, ձեր ներկայացրած հերքման տեքստում ասվում է, որ "Հայկական Ժամանակի" տվյալ հրապարակման մեջ բերված տեղեկությունները, իբր, չեն համապատասխանում իրականությանը եւ ներկայացվել են առանց հավաստիությունը ստուգվելու:*

*Տեղյակ եմ պահում ձեզ, որ խնդրո առարկա հրապարակման մեջ հիշատակված փաստերը հաստատվել են Մոսկվայում գործող «Միաբանություն» ազգային*

---

[1] Շարադրված է հրապարակված հոդվածի բովանդակությունը:

*ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանի կողմից, ում ՌԴ իրավապահ մարմինների ներկայացուցիչները իրենք են տեղեկացրել ձեր կողմից վիճարկվող հրապարակման մեջ առկա փաստերի գոյության մասին եւ Կարախանյանի հետ զրուցել են հայաստանցի մի շարք անձանց գործունեության մասին ավելի ամբողջական կարծիք կազմելու համար:, Կարախանյանն, ըստ այդմ, անձամբ է ծանոթացել այդ ցուցակին, որում ինչպես նշված է ձեր կողմից վիճարկվող հրապարակման մեջ, առկա են նաեւ ձեր անունները: Մեր թղթակցի հետ զրույցում Կարախանյանը վերահաստատել է, որ ձեր անունները ընդգրկված են ցուցակում:*

*Տեղյակ եմ պահում նաեւ, որ «Հայկական ժամանակ» օրաթերթը գործում է ՀՀ Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան եւ որեւէ մեկի պատիվն ու արժանապատվությունը արատավորելու նպատակ չի հետապնդում:*

*Միով բանիւ, տեղեկացնում եմ, որ պատրաստ ենք «Զանգվածային լրատվության մասին» օրենքով նախատեսված կարգով քննարկել ձեր կողմից ստորագրված պատասխանի տեքստի տարածման հարցը՝ նման տեքստ մեզ ներկայացնելու պարագայում:»*

1.4. Սույն գրությանը հայցվորները որևէ պատասխան չեն ներկայացրել:

1.5. 02/11/2010թ. «Հայկական ժամանակ» օրաթերթի թիվ 2636 համարում հրապարակել է հոդված «Մոսկվան ընկել է Սերժենց հետևից» վերնագրով, որում ներկայացվել է Մոսկվայի «Միաբանություն» Ազգային ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանի հետ հարցազրույցը, որում Սմբատ Կարախանյանը ընդհարձակ հարզազրույցում նշել է, որ ՌԴ իրավապահ մարմինների ներկայացուցիչները իրենք են տեղեկացրել իրեն 14/10/2010թ. վիճարկվող հրապարակման մեջ առկա փաստերի գոյության մասին և որ Կարախանյանի հետ զրուցել են հայաստանցի մի շարք անձանց գործունեության մասին ավելի ամբողջական կարծիք կազմելու համար:, Կարախանյանը նշել է, որ անձամբ է ծանոթացել այդ ցուցակին, որում առկա են եղել հայցվորների անունները: Թղթակցի հետ զրույցում Կարախանյանը վերահաստատել է, որ հայցվորների անունները ընդգրկված են եղել ցուցակում, որն ինքը տեսել է անձամբ:

1.6. 08.11.2010թ. հայցվորները դիմել են Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ առաջին ատյանի դատարան) պահանջելով դատարանից պարտավորեցնել Պատասխանողին «Հայկական ժամանակ» օրաթերթի միջոցով հերքել տարածված ապատեղեկատվությունը՝ հայցադիմումին կից ներկայացված հերքման տեքստը օրաթերթի առաջին էջում հրապարակելու միջոցով, վճարել փոխհատուցում յուրաքանչյուր հայցվորին 2000000 ՀՀ դրամի չափով և հայցվորներից յուրաքանչյուրի հայցադիմումի պատրաստման և դատական ներկայացուցչության համար կատարված վճարումները՝ յուրաքանչյուր պայմանագրի համար 500.000 ՀՀ դրամ:

1.7. 18/12/2010թ.-ին պատասխանողի կողմից հրապարակվող «Հայկական ժամանակ» օրաթերթում հրապարակվել է ճշտում՝ հետևյալ բովանդակությամբ.

*«Ճշտում*

***Հայկական Ժամանակ-ի 2012թ. հոկտեմբերի 14-ի համարի առաջին էջում «Ութից յոթը ցուցակում են» վերնագրի ներքո թյուրիմացաբար տպագրվել է նյութի աշխատանքային, չխմբագրված տարբերակ: Ըստ այդմ, հրապարակման տեքստը անհրաժեշտ է կարդալ հետեւյալ կերպ.***

*«Մոսկվայի «Միաբանություն» Ազգային ակումբի նախագահ Սմբատ Կարախանյանը օրերս մեր թղթակցի հետ զրույցում հետաքրքիր տեղեկություններ է հայտնել: Ըստ նրա, ՌԴ ազգային անվտանգության մարմինը, դատախազությունը եւ մյուս իրավապահ մարմինները տարբեր քրեական գործերի նախաքննության ընթացքում՝ հիմնականում նարկոթրաֆիկինգի, թրաֆիկինգի եւ փողերի լվացման գործերով պարզել են, որ…»:*[2]

***Ներողություն խնդրելով մեր ընթերցողներից նշված վրիպակի համար, խնդրում ենք 14.10.2010թ. ,ՀԺ-ի առաջին էջում տպագրված՝ Ութից յոթը ցուցակում են՝ հրապարակումը ընթերցել սույն ճշտման մեջ մեջբերված տարբերակով»:***

1.8. 07.02.2011թ. առաջին ատյանի դատարանը սույն գործով կայացրել է վճիռ, որով հայցվորների հայցը բավարարվել է մասնակի: Դատարանը վճռել է պարտավորեցնել «Դարեսկիզբ» ՍՊԸ-ին՝ հերքելու «Հայկական ժամանակ» օրաթերթի 2010 թվականի հոկտեմբեր 14-ի թիվ 188 համարի առաջին էջի կենտրոնում հրապարակված «Ութից յոթը ցուցակում են» խորագրով հոդվածում հայցվորներ Ռ. Հայրապետյանի, Լ. Սարգսյանի, Ս. Ալեքսանյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող (զրպարտող) տեղեկությունները և հերքումը տպագրել նույն «Հայկական ժամանակ» օրաթերթում՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում «Հերքում» խորագրի ներքո՝ Դատարանի կողմից սահմանված բովանդակությամբ և ձևով: Վճռվել է նաև «Դարեսկիզբ» ՍՊԸ-ից հօգուտ Ս. Ալեքսանյանի, Ռ. Հայրապետյանի, Լ. Սարգսյանի համապատասխանաբար բռնագանձել 2044000-ական (երկու միլիոն քառասունչորս հազար) ՀՀ դրամ յուրաքանչյուրի համար, որից՝ 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամը՝ որպես փոխհատուցման գումար, 44.000 (քառասունչորս հազար) ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

1.9. Առաջին ատյանի դատավարությունն իրականացվել է երկու դատական նիստերով, որոնցից առաջինն ընգրկել է դատավարության նախապատրաստական փուլը, իսկ երկրորդը՝ ըստ էության դատական քննությունը: Նախապատրաստական դատական փուլում պատասխանողի փաստաբանը հայտնել է դատարանին, որ նույն օրն է ներգրավված եղել գործում և խնդրել իրեն տրամադրել նվազագույնը երկու շաբաթ

[2] Շարադրված է հրապարակված հոդվածի բովանդակությունը:

ժամկետ՝ գործի նյութերին ծանոթանալու համար: Միջնորդությունը բավարարվել է մասնակի և պատասխանողի ներկայացուցչին տրամադրվել է յոթ օր ժամանակ:

1.10. Նույն օրը պատասխանողի ներկայացուցիչը միջնորդել է իրեն տրամադրել քաղաքացիական գործի նյութերի պատճենները, որոնք չէին ուղարկվել հայցադիմումին կից: Սույն միջնորդությունը դատարանի կայացրած որոշմամբ բավարարվել է, սակայն նույնիսկ պետական տուրքը վճարած լինելու պարագայում դատարանը չի տրամադրել քաղաքացիական գործի նյութերը պատասխանողի փաստաբանին: Գործի նյութերը փաստաբանին տրամադրվել են միայն վերաքննիչ դատարանի դատավարության ընթացքում:

1.11. Երկու նիստերում դատարանը չի ապահովել պատասխանող լրատվամիջոցի գլխավոր խմբագրի ներկայությունը, իսկ երկրորդ նիստում՝ լրատվամիջոցի փաստաբանի ներկայությունը: Գործով դատաքննությունն անցկացվել է լրատվամիջոցի փաստաբանի բացակայությամբ, որի ընթացքում դատարանն ավարտել է դատաքննությունը և նշանակել վճռի հրապարակման օրը:

1.12. Պատասխանողի փաստաբանը ներկայացրել է վերաքննիչ բողոք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան (վերաքննիչ դատարան), որի հետ ներկայացրել է իր պնդումները հիմնավորող մի շարք փաստաթղթեր և փաստական տվյալներ, օրինակ՝ հայցվորներին ուղարկված 01/11/2010թ. գրության պատճենը, 02/11/2010թ. «Հայկական ժամանակ» օրաթերթի թիվ 2636 համարում հրապարակված «Մոսկվան ընկել է Մերժենց հետևից» վերնագրով հրապարակումը, պատասխանողի 2010թ.-ի տարեկան հաշվետվության օրինակները, 18/12/2010թ.-ին պատասխանողի կողմից «Հայկական ժամանակ» օրաթերթում հրապարակված ճշտումը և այլն: Պատասխանողի փաստաբանը նշել է, որ առաջին ատյանի դատարանում նշված փաստաթղթերը ներկայացնելու հնարավորություն չի ունեցել արդար դատաքննության իրավունքի խախտումների պատճառով և խնդրել է վերաքննիչ դատարանին վերը նշվածը հաշվի առնելով փաստաթղթերը համարել որպես գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստաթղթեր:

1.13. 26/05/2011թ.-ի դատական նիստում պատասխանողի ներկայացուցիչը խնդրել է վերաքննիչ դատարանին հաշվի առնել, որ գործն ուղղակիորեն վերաբերվում է լրատվամիջոցի, որի գործունեության ղեկավարումը իրականացնում է լրատվամիջոցի գլխավոր խմբագիրը՝ Նիկոլ Փաշինյանը, ով այդ պահին գտնվում է անազատության մեջ, սակայն ՀՀ Ազգային Ժողովի համաներում հայտարարելու մասին որոշման համաձայն կարող է առաջիկա մի քանի ժամերի ընթացքում ազատ արձակվել և հաշվի առնելով պատասխանողի՝ որպես գլխավոր խմբագրի դատաքննությանը ներկա գտնվելու և նրա հետ առանձնազրույց ունենալու կարևորությունը դատավարության արդյունավետության տեսակետից, խնդրել է հետաձգել դատական նիստը:

1.14. Դատարանը մերժել է միջնորդությունը: Նույն օրը վերաքննիչ դատարանն ավարտել է դատաքննությունը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝

վերաքննիչ դատարան) 09.06.2011թ. քննելով վերոնշյալ վճռի դեմ Պատասխանողի կողմից բերված վերաքննիչ բողոքը՝ որոշել է վերաքննիչ բողոքը մերժել: Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.02.2011թ. թիվ ԵԿԴ 2347/02/10 վճիռը թողնել անփոփոխ՝ օրինական ուժի մեջ: Դատական նիստի ավարտից երկու ժամ անց «Արթիկ» ՔԿՀ-ից ազատ է արձակվել պատասխանող լրատվամիջոցի գլխավոր խմբագիրը:

1.15. Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվել է վճռաբեկության կարգով: ՀՀ վճռաբեկ դատարանը բողոքը ետ է վերադարձրել :

## 2. Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը

Նկատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների կազմումն ու հրապարակումը՝ Խորհուրդը որոշել է սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրել վիճարկվող հոդվածը և հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

## 3. Ներպետական և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքները

*ՀՀ Սահմանադրություն*

3.1. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն.

*«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք...: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվության այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է...»:*

3.2. ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն.

*«Մարդու և քաղաքացու՝ Սահմանադրության 27 հոդվածով...ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում...այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար...:*
*Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:*

*Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա*

3.3. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

*«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից...:*

*2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ ... այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:*

3.4. ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածից և ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ անձի արտահայտվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթե միջամտությունը՝

- նախատեսված է օրենքով»,
- ծառայում է հոդվածում թվարկված «իրավաչափ նպատակներից» առվազն մեկին, տվյալ դեպքում՝ անձի «պատվի և բարի համբավի» կամ «հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելուն», և
- «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Այս վերջին պայմանը պահանջում է, որպեսզի ՄԻԵԴ-ը որոշի, թե արդյո՞ք գանգատի առարկա միջամտությունը բխում է «հրատապ հասարակական կարիքից», արդյո՞ք այն համաչափ է իր առջեւ դրված «իրավաչափ նպատակին» եւ արդյո՞ք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «վերաբերելի են և բավարար»:

*Ներպետական և միջազգային պաշտպանական կառուցակարգեր*

3.5. Վիրավորանքի և զրպարտության գործերով ներկայումս լայնորեն ճանաչված սկզբունք է, որ որոշ հանգամանքների ներքո լրատվամիջոցները և լրագրողները պետք է պաշտպանված լինեն նույնիսկ իրականությանը չհամապատասխանող և զրպարտող բնույթի հայտարարությունների համար: Այս սկզբունքն արտահայտվում է մի շարք պաշտպանական կառուցակարգերով, որոնք հետևյալն են.

*Բարեխիղճ հայտարարություն (fair comment)*

3.6. Բարեխիղճ հայտարարության պաշտպանությունը կիրառվում է բազմաթիվ երկրների ներպետական իրավունքում, ինչպես նաև եվրոպական դատարանի կողմից:

3.7. Միացյալ նահանգներում նշված տեսությունը կոչվում է «բարեխիղճ մեկնաբանություն (կամ կարծիք») (fair comment) եզրույթով, որի իրավական սահմանումը հետևյալն է *«ընդհանուր իրավունքում կիրառվող պաշտպանական [կառուցակարգ] է, որը երաշխավորում է հանրային հնչեղություն ունեցող դեպքերի վերաբերյալ հայտարարություններ կատարելու մամուլի ազատությունը, եթե այդ հայտարարությունները չեն կատարվել չարամտորեն կամ հայցվորին վնաս պատճառելու մտադրությամբ»:* Այս սահմանումն ընդունվել է *Նյու Յորք Թայմսն ընդդեմ Սալլիվանի* գործով ԱՄՆ Գերագույն դատարանի հայտնի որոշման մեջ, որի կարևորությունը կայանում է նրանում, որ դրանում ընդրկվեց «ակնհայտ չարամտության» չափորոշիչը, ըստ որի հայտարարության իրականությանը չհամապատասխանելը դեռ բավարար պայման չէ լրատվամիջոցին պատասխանատվության ենթարկելու համար (նախկինում դա ինքնին բավարար պայման կհանդիսանար) և հայցվորը պետք է նաև ապացուցի, որ իրականությանը չհամապատասխանող փաստացի հայտարարություն կատարելիս լրագրողը հետապնդել է ակնհայտորեն չարամիտ նպատակ (actual malice): Չարամիտ մտադրության առկայությունը ապացուցելու պարտականությունը գործում է միայն, եթե լրատվանյութը վերաբերվում է «հանրային պաշտոնյային», «հանրային դեմքին» կամ «հանրային հնչեղություն ունեցող իրադարձությանը»:

3.8. Կանադայում բարեխղճորեն կատարված հայտարարությունը պետք է վերաբերվի միայն հանրային հնչեղություն ունեցող դեպքի (բացառելով ասեկոսեները), հիմնված լինի լայնորեն հայտնի կամ ապացուցելի փաստերի վրա, պետք է հիմնված լինի այնպիսի կարծիքի վրա, որին յուրաքանչյուր անձ ողջամտության սահմաններում կհանգի տվյալ փաստերի հիման վրա և որը արտահայտված կլինի ակնհայտ չարամտության բացակայությամբ: Հիմնական չափորոշիչն է, թե արդյոք վիճահարույց հայտարարությունը փաստացի հայտարարություն է, թե կարծիք և թե արդյոք դա կարելի է բխեցնել լայնորեն հայտնի փաստերից:

3.9. Անգլիայում բարեխղճորեն կատարված լրատվության պաշտպանությունը չի ներառում փաստի մասին զրպարտող բնույթի հայտարարությունները: Այդուհանդերձ, այս դրույթից նույնպես կա բացառություն, որը կոչվում է «արտոնյալ վիճակ» հասկացությամբ, ըստ որի հասարակության մեջ կան անձինք, ովքեր հաղորդում տարածելիս ոչ թե գործում են ինքնանպատակ, այլ իրենց իրավական, սոցիալական կամ բարոյական պարտավորություններից ելնելով: Նման անձանց թվին են պատկանում լրագրողները: Հետևաբար, նման պաշտպանական կառուցակարգի նպատակն է, որպեսզի հասարակության անդամը մեկ այլ անդամից առանց խոչընդոտի ստանա հանրային հետաքրքրություն ներկայացնող բարեխիղճ տեղեկատվություն: Սա իրավունքի վերջնական նպատակն է, իսկ նման տեղեկատվություն տրամադրող անձին պաշտպանության տակ առնելը նշված իրավունքի իրականացման միջոցն է: Հետևաբար, դատարանը պաշտպանում է հանրային հետաքրքրություն ներկայացնող այնպիսի տեղեկատվությունը, որում բացակայում է չարամիտ մտադրությունը:

3.10. *Times Newspaper LTD-ն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով որոշման մեջ (թիվ 23676 և 3002/03) եվրոպական դատարանը, վկայակոչելով Անգլիայի ներպետական նախադեպային իրավունքը, տվել է հետևյալ մեկնաբանությունը. *«…հանրության բարօրությունը պահանջում է, որպեսզի քաղաքացիները կարողանան հաղորդակցվել ազատորեն (նույնիսկ եթե դա վերաբերվում է փաստի մասին զրպարտող բնույթի հայտարարությանը, որի ճշմարտացիությունը հնարավոր չէ ապացուցել)՝ առանց վախենալու, որ կենթարկվեն պատասխանատվության: Այդ [կառուցակարգը] լրատվամիջոցներին ազատում է մասնավոր անձանց նկատմամբ զրպարտող բնույթի փաստացի հայտարարությունները ստուգելու պարտականությունից, եթե դրանք տարածվել են հաշվի առնելով բոլոր վերաբերելի հանգամանքները և համաձայն «պատասխանատու լրագրության» չափանիշների»* (էջ 17):

3.11. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշված խնդրին անդրադարձել է իր մի շարք որոշումներում, որից մեկում տվել է հետևյալ հավաքական ձևակերպում. «

3.12. *«Դատարանը վերհիշում է, որ երբ անհրաժեշտություն է առաջացել որոշելու, թե արդյոք թերթերն ազատված են մասնավոր անձանց նկատմամբ զրպարտող բնույթի փաստացի հայտարարությունը ստուգելու սովորական պարտականությունից, դատարանը կիրառել է հայեցողություն՝ մի շարք գործոններ հաշվի առնելուց հետո, մասնավորապես. զրպարտության բնույթը և աստիճանը և թե ինչ աստիճանի թերթը կարող էր ողջամտության սահմաններում իր աղբյուրները համարել վստահելի՝ ներկայացված պնդումների առնչությամբ…: Նշված գործոնները իրենց հերթին պահանջում են հաշվի առնել այլ գործոններ, օրինակ, աղբյուրի հեղինակավոր լինելը (Բլադեթ Տրոմսոն ու Սթենսասն ընդդեմ Նորվեգիայի (ՄՊ), վկայակոչված վերևում), արդյոք թերթը մինչև հրապարակումը տարածելը ողջամտության սահմաններում կատարել է բավարար չափով հետազոտություն (Պրագերն ու Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի, 26 ապրիլի 1995թ. վճիռ, Շարք Ա, թիվ 313, կետ 37), արդյոք թերթը պատմությունը ներկայացրել է ողջամտորեն հավասարակշված կերպով (Բերգենս Տիդենդեն ու այլոք ընդդեմ Նորգեվիայի, թիվ 26132/95, կետ 57, ՄԻԵԴ 2000-IV) և թե արդյոք թերթը հնարավորություն է ընձեռնել զրպարտված անձանց պաշտպանելու իրենց (Բերգենս Տիդենդեն ու այլոք ընդդեմ Նորգեվիայի, վկայակոչված վերևում, կետ 58):*

3.13. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 1087.1 հոդվածի 2-րդ կետի համաձայն, վիրավորանք չի կարող համարվել այն հրապարակային հայտարարությունը, որը չի տարածվել անձին «արատավորելու նպատակով» կամ հիմնված է ստույգ փաստերի վրա կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

3.14. Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն, զրպարտությունը անձին արատավորող փաստացի հայտարարություն է, իսկ 5-րդ կետի համաձայն, անձն ազատվում է նման հայտարարություն կատարելու համար պատասխանատվությունից, եթե այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից, կամ էլ հայտարարությունը պայմանավորված է գերակա հանրային շահով և եթե փաստացի տվյալները

հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները:

*Ողջամիտ հրապարակում (reasonable publication)*

3.15. Լրագրողական աշխատանքի առանձնահատկությունը պահանջում է լուրերը հրապարակել այն պահին, երբ դա խիստ անհրաժեշտ է և անհետաձգելի, և ավելորդ ձգձգումը կարող է նվազեցնել լրատվանյութի ակտուալությունը: Նույնիսկ լավագույն լրագրողը կարող է սխալ թույլ տալ, սակայն դա չի նշանակում, որ յուրաքանչյուր նման դեպքում պետք է շտապել լրագրողին կամ լրատվանյութին ենթարկել պատասխանատվության: Նման դեպքերում պաշտպանությունը գործում է «բարեխղճության» և «ողջամտության» սկզբունքների հիման վրա, ըստ որի *«հաշվի առնելով, որ արտահայտվելու ազատության իրականացումը կապված է «պարտավորությունների» և «պատասխանատվության» հետ, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ լրատվություն տարածելու 10-րդ հոդվածով սահմանված լրագրողի պաշտպանությունը գործում է, եթե [լրագրողները] գործում են բարեխղճորեն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն տրամադրելու նպատակով (Բլադետ Տրոմսոն ու Սթենսասն ընդդեմ Նորվեգիայի (ՄՊ),*թիվ 21980/93, 20/05/1999, կետ 65):

3.16. Ըստ մեկ այլ մեկնաբանության, «ողջամիտ հրապարակում» պաշտպանությունը գործում է, եթե հիմնավորվում է, որ ցանկացած այլ անձ լինելով տվյալ լրագրողի փոխարեն և ցանկացած այլ հանգամանքներում տվյալ լրատվանյութը կտարածեր այնպես, ինչպես դա արել էր լրագրողը:[3]

3.17. Օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անձն ազատվում է զրպարտող բնույթի փաստացի հայտարարություն կատարելու համար պատասխանատվությունից, եթե հայտարարությունը պայմանավորված է գերակա հանրային շահով և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները:

*Այլ անձանց հայտարարությունների վերարտադրումը*

3.18. Ըստ եվրոպական դատարանի, “Հարցազրույցի ընթացքում ուրիշի կողմից արված հայտարարությունների տարածմանն աջակցող լրագրողին պատժելը լրջորեն կխոչընդոտի հանրային շահին առնչվող հարցերի քննարկմանը՝ մամուլի ունեցած նպաստին և նման պատիժ չպետք է նախատեսվի, եթե չկան դրա համար առանձնապես

[3] «Զրպարտության Սահմանումը» Արտիկլ 19 հասարակական կազմակերպություն: Հուլիս 2000, սկզբունք 9:

հիմնավոր պատճառներ” *(Թոման ընդդեմ Լյուքսեմբուրգի,* թիվ 38432/97, 29/03/2001թ. պարբ. 62):

3.19. Վերևում վկայակոչված գործով վճռում եվրոպական դատարանը նշել է, որ *«լրագրողների նկատմամբ ընդհանուր պահանջը, ըստ որի նրանք պարտավոր են պարբերաբար և ձևականորեն իրենց տարանջատել այլ անձանց վիրավորող, սադրող կամ նրանց հեղինակությանը վնասող մեջբերման բովանդակությունից անհամատեղելի է ընթացիկ դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն, կարծիքներ և գաղափարներ տարածելու մամուլի դերի հետ»* (պարբ. 64):

3.20. Օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

**4. Վիճարկվող հոդվածի իրավական վերլուծությունը**

4.1. Վիճարկող հոդվածի, հայցադիմումում մեջ բերված արտահայտությունների իրավաչափության գնահատումը հիմնված է վերը շարադրված ներպետական և միջազգային նորմերի, այդ նորմերով սահմանված իրավական պաշտպանական կառուցակարգերի վրա:

4.2. ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով սահմանված ընդհանուր սկզբունքը հանրային նշանակության հարցերի շուրջ արտահայտվելու ազատության իրավունքի իրականացման վերաբերյալ հետևյալն է. “Մամուլը կենսական դեր է խաղում ժողովրդավարական հասարակությունում, այն պարտականություն ունի տեղեկատվություն տարածել հանրային շահերին վերաբերող հարցերի շուրջ, իսկ հասարակությունը իրավունք ունի ստանալու այն:” Պետության “հայեցողության լուսանցքը” սահմանափակված է ժողովրդավարության շահով՝ մամուլի “հանրային հսկող շան” դերը կատարելու և հանրային լուրջ մտահոգության առարկա հանդիսացող հարցերի շուրջ տեղեկատվություն տարածելու հնարավորությունը ապահովելու նպատակով (Գուդվինն ընդդեմ Միացյալ Թագավորության, Բլադեթ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի գործերով կայացված վճիռներ): ՄԻԵԴ-ի կողմից սահմանված չափանիշներին համապատասխան՝ լուրջ հիմքեր են պահանջվում հանրային շահին վերաբերող հարցերի շուրջ բանավեճի սահմանափակումը արդարացնելու համար:

*Հայցվորի կարգավիճակը*

4.3. Զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ գործերի քննության համար կարևոր բաղադրատարր է հանդիսանում հայցվորի կարգավիճակը: Մարդու իրավունքների

եվրոպական դատարանը տարբերակել է հայցվորների մի քանի կատեգորիաներ և դրանցով պայմանավորել է ընդունելի քննադատության շրջանակները նրանց նկատմամբ: Սույն գործով երեք հայցվորները ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ են, հետևաբար նաև՝ քաղաքական գործիչներ:

Լինգենսն ընդդեմ Ավստրիայի գործով կայացված վճռով ՄԻԵԴ-ի կողմից սահմանվեց քաղաքական գործիչների ընդունելի քննադատության սահմանների ընդհանուր սկզբունքը, ըստ որի՝ "քննադատության ընդունելի շրջանակները քաղաքական գործիչների նկատմամբ, համապատասխանաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց նկատմամբ: Ի տարբերություն վերջիններիս՝ քաղաքական գործիչները անխուսափելիորեն և գիտակցաբար բաց են իրենց յուրաքանչյուր խոսքի և արարքի մանրակրկիտ քննարկման համար ինչպես լրագրողների, այնպես էլ լայն հանրության կողմից և, հետևաբար, պետք է դրսևորեն հանդուրժողականության առավել բարձր աստիճան: Անկասկած է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը հնարավորություն է ընձեռում պաշտպանելու նաև այլոց հեղինակությունը, այն է՝ բոլոր անձանց հեղինակության պաշտպանություն է նախատեսում, և այս պաշտպանությունը տարածվում է նաև քաղաքական գործիչների վրա, նույնիսկ երբ նրանք չեն գործում որպես մասնավոր անձինք, բայց այս դեպքում նման պաշտպանության պահանջները պետք է կշռադատվեն՝ քաղաքական հարցերի բաց քննարկման շահերից ելնելով":

*Պատասխանողի կարգավիճակը*

4.4. Զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ գործերով առանձնակի կարևորություն է ձեռք բերում նաև պատասխանողի կարգավիճակը: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին համապատասխան մամուլի ազատությանը և քաղաքական խոսքին տրամադրվում է առանձնակի պաշտպանություն, հաշվի առնելով նրանց կենսական նշանակությունը ժողովրդավարական հասարակությունում: «Լրագրողական ազատությունը ենթադրում է նաև որոշակի չափազանցության և նույնիսկ սադրանքի դիմելու հնարավորություն»: (Բլադեթ Թրոմսո և Ստենսաս ընդդեմ Նորվեգիայի, Պրագերն ու Օբրշլիքն ընդդեմ Ավստրիայի և այլն):

*Փաստական տվյալներ և գնահատողական դատողություններ*

4.5. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հայցվորի կողմից վիճարկվող արտահայտությունների ապացուցման վերաբերյալ մշակված ընդհանուր մոտեցումը հետևյալն է. եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն: Գնահատողական դատողության ճշմարտացիության ապացուցման պահանջը անհնար է կատարել և խախտում է կարծիքի ազատությունն ինքնին, որը 10-րդ հոդվածով սահմանված իրավունքի հիմնարար մասն է: Երբ արված հայտարարությունը հանդիսանում է գնահատողական դատողություն, միջամտության համաչափությունը կախված կլինի նրանից, թե արդյոք առկա են բավարար փաստական հիմքեր վիճարկվող արտահայտության կատարման համար, քանի որ նույնիսկ գնահատողական դատողությունն առանց այն պաշտպանող

որևէ փաստական հիմքի կարող է լինել չափազանց: Այդ փաստական հիմքերի և դատողության միջև կապի անհրաժեշտությունը տարբեր է՝ կախված կոնկրետ գործի հանգամանքներից:
Որքան ավելի լուրջ է վիճարկվող հայտարարությունը, այնքան ավելի ամուր պետք է լինեն դրա փաստական հիմքերը:

4.6. Վիճարկվող հոդվածով ներկայացված տեղեկատվությունը կարող է որակվել որպես փաստական տվյալների շարադրանք (statement of fact)՝ հոդվածում հիշատակված պաշտոնյաների ռուսական կրիմինալ խմբավորումների հետ կապեր ունենալու և Ռուսաստանի Դաշնությունում քննվող որոշ քրեական հանցագործություններին/գործերին առնչություն ունենալու մասով: Ընդ որում, հանցագործությունների մասին խոսելիս հոդվածի հեղինակը հղում է կատարում *“հիմնականում նարկոթրաֆիքինգի, թրաֆիքինգի եւ փողերի լվացման գործերին”:* Այս տեղեկություններն ու արտահայտությունները կարող են դիտվել որպես հոդվածում հիշատակված անձանց պատիվն ու արժանապատվությունը արատավորող: Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում հոդվածի ամբողջական բովանդակությունը և համատեքստը, ինչպես նաև այն ընդհանուր տպավորությունը, որն այն կարող է առաջացնել ընթերցողի մոտ:

4.7. Մյուս կողմից հոդվածը շարադրված է ընդհանուր ձևակերպումներով՝ համապատասխան անձանց “քրեական գործերի հետ առնչություն ունենալու”, “ռուսական կրիմինալ խմբավորումների հետ կապեր ունենալու” արտահայտություններ օգտագործելու միջոցով: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հոդվածի հեղինակը խուսափել է հանցագործությունների կատարմանը “մասնակցություն” արտահայտության օգտագործումից, որը կենթադրեր համապատասխան հանցագործությունների կատարման մեջ հիշատակված պաշտոնատար անձանց ուղղակի մեղադրանքի առաջադրում:

4.8. Այնուամենայնիվ, հոդվածում հիշատակված քրեական հանցագործություններին առնչություն ունենալու և ռուսական կրիմինալ խմբավորումների հետ կապեր ունենալու վերաբերյալ պնդումը ինքնին կարող է դիտարկվել որպես անձի պատիվն ու արժանապատվությունը արատավորող:

«Բարեխիղճ հայտարարություն» (fair comment) պաշտպանությունը

4.9. Պատասխանող լրատվամիջոցի կողմից բարեխղճորեն գործելու և փաստերի վերաբերյալ հայտարարությունները ստուգելու ընդհանուր լրագրողական պարտավորության իրականացման վերաբերյալ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում ամրագրված ընդհանուր մոտեցումը հետևյալն է. « Կոնվենցիայի 10-րդ հոդվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ՝ պահպանելով լրագրողական էթիկայի պահանջները»:

4.10. ՄԻԵԴ-ը, սակայն, իր վճիռներում քննարկել է նաև հատուկ հիմքերի առկայության հարցը, որոնց պարագայում տպագիր լրատվամիջոցը կարող է ազատվել մասնավոր անձանց զրպարտող փաստերի վերաբերյալ պնդումները ստուգելու իր ընդհանուր պարտականությունից: Նման հատուկ հիմքերի առկայությունը կախված է «վիճարկվող զրպարտության բնույթից և աստիճանից» և տեղեկատվություն տրամադրող աղբյուրի վստահելիությունից, որոնք էլ իրենց հերթին պահանջում են հաշվի առնել մի շարք այլ գործոններ, ինչպիսին են, թե արդյոք լրատվամիջոցը մինչև հրապարակումը տարածելը ողջամտության սահմաններում կատարել է բավարար չափով հետազոտություն, արդյոք լրատվամիջոցը հրապարակումը տարածել է ողջամտության սահմաններում հավասարակշված կերպով և թե արդյոք լրատվամիջոցը զրպարտված անձանց հնարավորություն է ընձեռնել պաշտպանել իրենց (տե՛ս 3.12 կետը, որտեղ նշված մի շարք գործերով Դատարանը, վկայակոչելով «հատուկ հիմքեր»-ի առկայությունը գտել է, որ դիմումատուն գործել է բարեխղճությամբ, չնայած նրան, որ հանրային շահերին վերաբերող փաստական տվյալների կամ գնահատողական դատողության համար բացակայել են բավարար ապացույցները:

4.11. Առաջնորդվելով վերը նշված սկզբունքներով, Խորհուրդը գտնում է, որ անհրաժեշտ է քննարկել լրատվամիջոցի տեղեկատվության աղբյուրի, այդ աղբյուրի վստահելիության, լրագրողի կողմից անհրաժեշտ ուսումնասիրություն կատարելու, լրատվանյութը հավասարակշռված կերպով տարածելու, լրատվամիջոցի կողմից զրպարտված անձանց իրենց պաշտպանելու ողջամիտ հնարավորություն ընձեռելու և փաստերը ստուգելու ողջամիտ հնարավորություն ունենալու հարցը:

4.12. Հոդվածի հրապարակումից հետո լրատվամիջոցը բացահայտել է իր տեղեկատվության աղբյուրը՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի 2010թ. նոյեմբերի 2-ի համարում հրապարակելով լրատվամիջոցին համապատասխան տեղեկություններ տրամադրած անձի/տեղեկատվության աղբյուր/ հետ ընդարձակ հարցազրույցը, որով վերջինս ընդունել է համապատասխան տեղեկությունների տրամադրման փաստը և հաղորդել է նաև նշված հրապարակմանը առնչվող այլ մանրամասներ: Հատկանշական է, որ լրատվամիջոցն իր աղբյուրը բացահայտել է դեռ արտադատական փուլում՝ հայցվորներին ուղարկած նամակով (տե՛ս կետ 1.3), այնուհետև հաջորդ օրը՝ կրկին արտադատական փուլում (կետ 1.5), որից միայն վեց օր հետո են հանցվորները ներկայացրել դատական հայց:

4.13. Լրատվամիջոցը կարող էր օգտվել նաև աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, որը ՄԻԵԴ նախադեպային իրավունքի համաձայն պաշտպանվում է գրեթե բացարձակ կերպով՝ բացառություն են կազմում միայն խիստ կարևոր հանգամանքների առկայությունը, ինչպիսին է, օրինակ, կազմակերպված հանցագործության կամ

ահաբեկչության դեմ պայքարի նպատակներով իրականացվող քրեական հետապնդման շրջանակներում դատարանների կողմից առաջադրված նման պահանջը:[4]

4.14. Այդուհանդերձ, լրատվամիջոցը որոշել է բացահայտել իր աղբյուրը, որը խոսում է լրագրողական բարեխղճության դրսևորման, լրատվամիջոցի կողմից իր աղբյուրի նկատմամբ վստահության առկայության, ակնհայտ չարամտության (actual malice) բացակայության և լրատվամիջոցի կողմից զրպարտված անձանց՝ իրենց պաշտպանելու ողջամիտ հնարավորություն ընձեռելու մասին: Նման հնարավորություն ընձեռելու մասին է խոսում նաև լրատվամիջոցի 01/11/2010 նամակը հայցվորներին (տե՛ս կետ 1.3), որով լրատվամիջոցը պատրաստակամություն է հայտնել *«օրենքով նախատեսված կարգով քննարկել… պատասխանի տեքստի տարածման հարցը»:* Թվարկված բոլոր հանգամանքները «բարեխիղճ հայտարարություն» պաշտպանության տարրեր են:

4.15. «Բարեխիղճ հայտարարություն» պաշտպանության կարևոր տարրերից է նաև լրատվանյութի հասարակական հետաքրքրություն ներկայացնելու հանգամանքը: Ինչպես արդեն նշվեց 4.2. և 4.4. կետերում, նյութն անկասկած ներկայացնում է հասարակական հետաքրքրություն և դրա հրապարակումը պայմանավորված է գերակա հանրային շահով, այն է. «*մամուլի ազատությունը քաղաքացիների համար լավագույն միջոցներից մեկն է՝ իմանալու և գնահատելու իրենց ղեկավարների գաղափարներն ու արարքները* (*Կաստելսն ընդդեմ Իսպանիայի,* թիվ 11798/85, 23/04/1992, պարբ. 43):

4.16. Ինչ վերաբերվում է վերջին չափորոշիչին, լրատվանյութի հավասարակշված կերպով տարածելու չափորոշիչը, ապա այս առումով հոդվածի հեղինակը խուսափել է հանցագործությունների կատարմանը «մասնակցություն» արտահայտության օգտագործումից, որն հակառակ դեպքում կենթադրեր համապատասխան հանցագործությունների կատարման մեջ հիշատակված պաշտոնատար անձանց ուղղակի մեղադրանքի առաջադրում:

4.17. Դատարաններն իրենց որոշումներում չեն կիրառել վերը նշված պաշտպանությունը, որի հնարավորությունը սակայն դատարաններն ունեին օրենսգրքի 1087.1 հոդվածի մի շարք դրույթներով (տե՛ս 3.13-3.14 կետերը): Ավելին, դատական վարույթն իրականացվել է այնպես, որ լրատվամիջոցի ներկայացուցիչը զրկվել է վերը նշված պաշտպանությունից օգտվելու համար իր փաստարկները և փաստաթղթերը ներկայացնելու հնարավորությունից (այս առումով տե՛ս 4.35-4.42 կետերը): Այս ամենը

---

[4] Տե՛ս, այս առումով, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2000)7 հանձնարարականը տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու լրագրողի իրավունքի մասին: Հանձնարարականի 3-րդ սկզբունքի համաձայն, տեղեկատվական աղբյուրի բացահայտման պահանջը կարող է իրավաչափ համարվել միայն, եթե դրա անհրաժեշտությունը պայմանավորված է գերակա հանրային շահով, որն էլ նշանակում է, որ պետք է հիմնավորվի, որ բացահայտման անհրաժեշտությունը 1) համոզիչ կերպով հաստատված է, 2) աղբյուրը բացահայտող պետական մարմինների կամ այլ անձանց մոտ սպառվել են այլընտրանքային բոլոր միջոցները, 3) բացահայտման անհրաժեշտություն պայմանավորված է հասարակական սուր պահանջի առկայությամբ:

հանգեցրել է լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ միջամտությանը:

4.18. Վերը նշվածը եզրահանգումները հիմք են տալիս եզրակացնելու, որ տեղի է ունեցել լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ միջամտություն սույն ենթաբաժնում շարադրված պաշտպանական համակարգի առումով:

*Ողջամիտ հրապարակում (reasonable publication) պաշտպանությունը*

4.19. «Ողջամիտ հրապարակում» պաշտպանությունը «բարեխիղճ հրապարակում» պաշտպանության դրսևորման առանձնահատուկ եղանակներից մեկն է: Հետևաբար, վերը նշված եզրահանգումները մասամբ կիրառելի են նաև այստեղ:

4.20. Օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետը տրամադրում է «ողջամիտ հրապարակում» պաշտպանության կառուցակարգը (տե՛ս կետ 3.17 վերևում), որի շրջանակներում փաստերը ցույց են տալիս, առաջին, որ վիճահարույց հրապարակումը ներկայացնում է հանրային հետաքրքրություն, երկրորդ, լրատվամիջոցը լրատվական նյութը ներկայացրել է հավասարակշռված և բարեխիղճ կերպով՝ ձեռնպահ մնալով անմեղության կանխավարկածը խախտող բնույթի հայտարարություն կատարելուց, երրորդ, լրատվամիջոցը ողջամտության սահմաններում ձեռնարկել է բավարար միջոցներ պարզելու համար փաստերի ճշմարտացիությունը՝ նախաձեռնել է Սմբատ Կարախանյանի հետ ընդհարձակ հարցազրույցը (կետ 4.13-4.15):

4.21. Հոդվածում տեղ գտած փաստերի վերաբերյալ պնդումների ստուգումը՝ հոդվածում հիշատակված անձանց՝ ռուսական կրիմինալ խմբավորումների հետ ունեցած կապերի և համապատասխան քրեական գործերի հետ առնչության մասով, լրագրողի համար դժվար թե կարող էր ողջամտորեն հնարավոր լինել ՌԴ իրավասու մարմինների միջոցով, նկատի ունենալով նախաքննության գաղտնիությունը, ինչպես նաև վերոգրյալ անձանց առնչության փաստը հավաստող հնարավոր տեղեկատվության մատչելիությունը: Ինչ վերաբերում է ՌԴ Գլխավոր դատախազության կողմից հասցեագրված գրությանը, ապա այն վերաբերում է զուտ Ռուսաստանի տարածքում հանցագործությունների իրագործմանը նշված անձանց <u>մասնակցության</u> մասին վկայող նյութերի բացակայությանը: Բացի այդ, հայաստանյան պաշտոնյաների ցանկի գոյության մասին տեղեկատվություն արդեն իսկ հրապարակվել էր այլ լրատվամիջոցներում:

4.22. Այդուհանդերձ, դատարանները այս համակարգը կիրառելուց նույնպես ձեռնպահ են մնացել և, ավելին, հնարավորություն չեն տվել լրատվամիջոցի ներկայացուցչին ներկայացնել իր փաստարկները և դրանք հիմնավորող փաստաթղթերը իրավահավասարության և մրցակցային դատավարության սկզբունքների պահպանումով (տե՛ս 4.35-4.42 կետերը):

4.23. Խորհրդին առանձնապես մտահոգում է այն հանգամանքը, որ դատարանները ոչ միայն ձեռնպահ են մնացել նշված ժամանակակից կառուցակարգերը կիրառելուց, այլ նաև ամբողջովին աղավաղել են դրանց իմաստը՝ դրանք ներկայացնելով բոլորովին այլ լույսի ներքո: Օրինակ, վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ վկայակոչել է *Պեդերսեն և Բաադսգարդ ընդդեմ Դանիայի* գործով եվրոպական դատարանը վճիռը (տե՛ս որոշման 18-րդ էջի նախավերջին պարբերությունը) և նշել, որ ըստ վճռում արված եզրահանգման *«լրագրողը պարտավոր է բացառապես հիմնվել հավաստի և արժանահավատ փաստական հանգամանքների վրա, որոնք պետք է համամասն լինեն տարածված արատավորող տեղեկատվության բնույթին և աստիճանին…»:* Նման բացարձակ տոնայնությամբ ձևակերպումն ամբողջությամբ մերժում է վերևում շարադրված «բարեխիղճ հրապարակում», «ողջամիտ հրապարակում», ինչպես նաև « այլ անձանց հայտարարությունների վերարտադրում» պաշտպանական համակարգերը (տե՛ս ներքևում): Մինչդեռ, եվրոպական դատարանը նշված դատական ակտի 78-րդ կետում նման միտք չի արտահայտել: Այդ պարբերությունում արտահայտված է այն միտքը, որ թեև որպես ընդհանուր կանոն լրագրողները պետք է գործեն բարեխղճորեն և ճշգրիտ փաստական հիմքերի հիման վրա տրամադրեն հավաստի և արժանահավատ տեղեկատվություն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա, այդուհանդերձ, ազատ արտահայտվելու իրավունքը թույլ է տալիս որոշ հատուկ հիմքերի առկայության դեպքում լրատվամիջոցներին կամ լրագրողներին ազատել մասնավոր անձանց զրպարտող փաստերի վերաբերյալ պնդումները ստուգելու իրենց ընդհանուր պարտականությունից, որից հետո վճռի տվյալ կետում շարադրվում են, թե որոնք են այդ հիմքերը, որոնց թվում, ի թիվս կետ 4.11-ում նշվածների, նշվում է նաև անմեղության կանխավարկածը: Մինչդեռ, ըստ Վերաքննիչ դատարանի, ստացվում է, որ լրագրողը սխալվելու իրավունք չունի և բացառապես բոլոր դեպքերում պարտավոր է տրամադրել «հավաստի և արժանահավատ» տեղեկատվություններ: Նման մոտեցումը չի արտահայտում ազատ արտահայտվելու իրավունքի ժողովրդավարական սկզբունքները:

*«Այլ անձանց հայտարարությունների վերարտադրում»*
*պաշտպանությունը*

4.24. Խորհուրդը համաձայն չէ վերաքննիչ դատարանի եզրահանգմանը, որ *«պատասխանողը կարող էր ազատվել պատասխանատվությունից <u>միայն</u>[5] այն դեպքում, եթե հոդվածում հստակ հղում կատարված լիներ այլ անձի հրապարակային ելույթին, որը տեղի է ունեցել մինչև հրապարակումը և որ այդ հրապարակումը լիներ այլ անձի հրապարակային ելույթի բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունը» (էջ 16):*

4.25. Խորհուրդը գտնում է, որ դատարանի նման եզրահանգումը խիստ սահմանափակող բնույթ ունի: Մյուս կողմից, որպես նվազագույն պայման պահանջվում է, որպեսզի լրագրողն իրեն բավարար չափով տարանջատի զրպարտող կամ վիրավորող բնույթի հայտարարության բովանդակությունից: «Բավարար չափով» հասկացությունը որոշվում է յուրաքանչյուր գործի հանգամանքների ներքո, մասնավորապես, թե արդյոք լրագրողը

[5] Ընդգծումը մերն է:

կամ լրատվամիջոցը տվյալ հանգամանքների ներքո և ողջամտության սահմաններում կիրառել է նվազագույն ճիգեր տեղեկատվության ճշգրտությունը ստուգելու համար: Թեև յուրաքանչյուր գործ յուրահատուկ է իր փաստական հանգամանքներով, սակայն բոլոր դեպքերում ընթերցողը պետք է ստանա այն տպավորությունը, որ հրապարակվածը ոչ թե լրատվամիջոցի հայտարարությունն է կամ կարծիքը, այլեւ լրագրողական աղբյուրի հայտարարության վերարտադրությունն է՝ խուսափելով ընթերցողին մոլորության մեջ գցելուց:

4.26. Անձի հեղինակության պաշտպանության իրավունքը և ազատ արտահայտվելու իրավունքը երկու մրցակցող, սակայն իրավաչափ (լեգիտիմ) շահեր են և միևնույն գործի շրջանակներում այս իրավունքների բախվելու դեպքում դատարանները պարտավոր են առաջնորդվել երկու իրավունքների միջև «արդարացի փոխհավասարակշռություն» սահմանելու սկզբունքով: Խորհուրդը ցավում է, որ սույն սկզբունքի վրա հղում կատարելով հանդերձ վերաքննիչ դատարանը նախընտրել է լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակել առավելագույն խստության չափորոշիչների կիրառումով: Նման մոտեցումը չի բխում բախվող լեգիտիմ շահերի միջև արդարացի հավասարակշռություն սահմանելու սկզբունքից:

**<u>Փոխհատուցման համաչափությունը.</u>**

4.27. Միջամտության համաչափության հարցում ՄԻԵԴ-ի մոտեցման համաձայն՝ պահանջվող փոխհատուցման չափը որոշելիս ներպետական դատարանները պետք է հաշվի առնեն այն անձանց սահմանափակ միջոցները, որոնց դեմ բերվում են զրպարտության կամ վիրավորանքի մասին հայցերը: Մասնավորապես՝ Ռոմանենկոն և այլոք ընդդեմ Ռուսաստանի գործում (թիվ 11751, 8/10/2009), ՄԻԵԴ-ը համարել է, որ դիմումատուի խոսքի ազատության իրավունքը խախտվել է նաև այն պատճառով, որ ներպետական դատարանները չեն վերլուծել, թե դիմումատուի եկամուտների որ մասն են կազմել պահանջվող գումարները և արդյոք դրանցով չափից ավելի մեծ բեռ չի դրվել նրանց վրա: Մինչդեռ, դիմումատուի պնդմամբ, ինչը չէր վիճարկել ՌԴ կառավարությունը, պահանջվող գումարները հավասար են եղել նրա չորս ամսվա եկամուտներին և հետևաբար եղել են անչափ խիստ (պարբ. 48): Դա է պահանջում նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը:

4.28. Խորհուրդը գտնում է, որ սույն գործով հայցվորներից յուրաքանչյուրի կողմից պահանջվող 2,000.000 (երկու միլիոն) (ընդհանուր առմամբ 6,000.000 (վեց միլիոն)) ՀՀ դրամի չափով փոխհատուցման պահանջը ակնհայտորեն չի բխում միջամտության համաչափության և անհրաժեշտության սկզբունքներից, քանի որ լրատվամիջոցը հայտնվում է խիստ անհամաչափ ծանր ֆինանսական բեռի տակ, որի արդյունքում վտանգվում է լրատվամիջոցի բնականոն գործունեությունը, որը որպես այդպիսին որևէ առնչություն չունի հայցվորների արդարացի փոխհատուցման պահանջի հետ:

4.29. Այնպիսի հանգամանքներում, որտեղ զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքերի առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը, սակայն դատարանը պատասխանողին զրկում է նման հանգամանքները հիմնավորելու կամ «բարեխիղճ հայտարարության» արդարացման պաշտպանությունը հայցելու նպատակով ապացույցներ կամ պնդումներ ներկայացնելու հնարավորությունից, դատարանը խախտում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հայեցողության իրավունքի շրջանակները և արդյունքում տեղի է ունենում լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ միջամտություն (*Ջերուսալեմն ընդդեմ Ավստրիայի,* թիվ 26958/95, 27/02/2001, պարբ. 46: *Նովայա Գազետա վ Վորոնեժե ընդդեմ Ավստրիայի,* թիվ 27570/03, 21/12/2010, պարբ. 56: Վիրավորանքի և զրպարտության գործերով դատավարական նման սահմանափակումներին եվրոպական դատարանը «վճռորոշ նշանակություն» է տալիս և եթե հանգում է եզրակացության, որ անհնարին կլիներ որոշել, թե ինչպիսին կլիներ դատավարության ելքը, եթե պատասխանողը հնարավորություն ունենար ներկայացնել իր բոլոր պնդումները և ապացույցները, նման դատավարական սահմանափակումներն անհրաժեշտ չեն ժողովրդավարական հասարակարգում՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համակցությամբ (*Կաստելլսն ընդդմ Իսպանիայի,* թիվ 11795/85, 23/04/92, պարբ. 49 և 50):

4.30. Օրենսգրքի 1087.1 հոդվածի 4-րդ մասով, ապացուցման բեռը կրում էր սույն գործով պատասխանող լրատվամիջոցը: Հետևաբար, դատարանները պետք է **առանձնակի զգուշություն ցուցաբերեին լրատվամիջոցի դատավարական իրավունքներն ապահովելու ուղղությամբ:** Այդուհանդերձ, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի վարույթներում դատավարություններն ընթացել են պատասխանող լրատվամիջոցի ներկայացուցչի դատավարական իրավունքների մի շարք սահմանափակումներով:

4.31. Առաջին ատյանի դատարանում պատասխանող լրատվամիջոցի ներկայացուցչի միջնորդությունը դատական նիստը 15 օրով հետաձգելու մասին բավարարվել է մասնակի՝ 7 օրով: Միջնորդությունն արվել էր գործի նյութերին ծանոթանալու նպատակով: Թեև դատարանն ուներ հայեցողության իրավունք, այդուհանդերձ, դատարանը ոչնչով, նույնիսկ դատավարության ողջամիտ ժամկետների պահպանման սկզբունքով կաշկանդված չէր դատական նիստը հետաձգել այն ժամկետով, որը խնդրել էր փաստաբանը՝ հատկապես հաշվի առնելով, որ պահանջված ժամկետը նույնպես ողջամիտ էր:

4.32. Առաջին ատյանի ողջ դատավարության ընթացքում պատասխանող լրատվամիջոցի փաստաբանին չեն տրամադրվել քաղաքացիական գործերի նյութերի պատճենները՝ մի իրավունք, որը պարզորոշ ամրագրված է դատավարական իրավունքով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին

մաս): Փաստաբանի միջնորդությանը գործի նյութերի պատճենները տրամադրելու համար դատարանի կողմից պատշաճ արձագանքի չի արժանացել: Գործով ըստ էության դատական քննությունն անցկացվել է փաստաբանի բացակայությամբ: Այսինքն, առաջին ատյանի դատարանի ողջ դատավարության ընթացքում պատասխանողի փաստաբանը հնարավորություն չի ունեցել վիճարկել հայցվորների պնդումները, ինչպես նաև ներկայացնել իր սեփական պնդումները և ապացույցները՝ գործի նյութերի հիման վրա:

4.33. Նշված դատավարական սահմանափակումները չեն վերացվել վերադաս ատյանի կողմից: Թեև վերաքննիչ դատարանը տրամադրել է գործի նյութերի պատճենները, այդուհանդերձ, նյութերի ուսումնասիրության հիման վրա փաստաբանի կողմից ներկայացրած միջնորդությունը, որում նա ներկայացրել էր գործի էության վերաբերյալ էական նշանակության փաստարկներ և ապացույցներ, վերաքննիչ դատարանը քննության առարկա չի դարձրել և իր որոշման մեջ չի անդրադարձել: Օրինակ, իր միջնորդության մեջ փաստաբանը խնդրել էր էական նշանակության ապացույց ճանաչել պատասխանող լրատվամիջոցի 2010թ-ի տարեկան հաշվետվությունը, որը պարունակում էր էական փաստական տվյալներ լրատվամիջոցի գույքային դրության մասին, որն էլ օրենսգրքի 1087.1 հոդվածի 11-րդ կետի 2-րդ մասի հիմքով հանդիսանում է փոխհատուցման չափը որոշելու հիմքերից մեկը: Ո՛չ առաջին ատյանի դատարանը, ո՛չ էլ վերաքննիչ դատարանը սույն փաստաթղթին ընդհանրապես չեն անդրադարձել:

4.34. Փաստորեն, ողջ դատավարության ընթացքում պատասխանող լրատվամիջոցի փաստաբանը զրկված է եղել հայցվորների պնդումները վիճարկելու, ինչպես նաև իր սեփական ապացույցները ներկայացնելու արդյունավետ հնարավորությունից:

4.35. Դատարանները չեն ապահովել պատասխանող լրատվամիջոցի գլխավոր խմբագրի ներկայությունը ողջ դատավարության ընթացքում: Դատարանը ներպետական դատավարական որևէ նորմով կաշկանդված չէր դա անել և հաշվի առնելով, որ գլխավոր խմբագիրն է վարում լրատվամիջոցի լրատվական քաղաքականությունը, նրա ներկայությունը կնպաստեր գործով օբյեկտիվ քննությանը:

4.36. Վերը շարադրված դատավարական սահմանափակումներն անկասկած պատասխանող լրատվամիջոցին դատավարության մյուս կողմի համեմատ դրել են անհավասար պայմանների մեջ: Հաշվի առնելով սահմանափակումների լրջության աստիճանը, Խորհուրդն արձանագրում է, որ դատարանները դրսևորել են անհամաչափ միջամտություն լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքին:

## 5. Եզրահանգում

Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքների, վերլուծությունների և չափանիշների լույսի ներքո՝ միջամտությունը պատասխանող կողմ հանդիսացող լրատվամիջոցի արտահայտվելու ազատության իրավունքի իրականացմանն իրավաչափ չէր: